ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15-ը փետրվարի 2018Թ. Թիվ-3
Գ.Լենուղի

# ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Լենուղի համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի գյուղական համայնքի ավագանու՝ 2018 թվականի փետրվարի 15-ի Թիվ-2 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Դ.Սարգսյան
Գ. Հունանյան
Ա. Ֆեսիկյան
Գ. Ծատուրյան
Ռ.Ալեքսանյան
Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2018թ. 15-ը փետրվարի
Գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ-2
ՆԻՍՏԻ ԹԻՎ-3 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

Թիվ-2-նիստի 15-02-2018թ.ժամը՝ 12:00

3.ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ.Մ.ԿՈՍՏԱՆՅԱՆ/*

4. ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ.Մ.ԿՈՍՏԱՆՅԱՆ/*

5-Ն. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ.Գ.ՂԱԶԱՐՅԱՆ/*

6-Ն. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ/*

7. ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ. Հ. ՄԻՆԱՍՅԱՆ/*

8. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ. Վ.ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

9. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

*/ԶԵԿ. Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ/*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15-ը փետրվարի 2018թ. Թիվ-4

# ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 13-րդ հոդվածի 2-րդ կետով Լենուղի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Լենուղի համայնքի ավագանու նիստերի հրավիրման ժամանակացույցը և սահմանել նիստերի հրավիրման ամիսները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Դ.Սարգսյան
Վ. Հունանյան
Ա. Ֆեսիլյան
Գ. Ծատուրյան
Ռ.Ալեքսանյան
Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2018թ.15-ը փետրվարի
Գ.Լենուղի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լենուղի համայնքի
ավագանու 2018թ. փետրվարի 15-ի
թիվ-2 նիստի թիվ-4 որոշման

# ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Թիվ - 1 նիստ փետրվարի-15

2.Թիվ - 2 նիստ ապրիլի -27

3.Թիվ - 3 նիստ հունիսի -27

4.Թիվ - 4 նիստ օգոստոսի -27

5.Թիվ - 5 նիստ հոկտեմբերի -26

6.Թիվ - 6 նիստ դեկտեմբերի -27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15-ը փետրվարի 2018թ. Թիվ-5-Ն
գ.Լենուղի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով» 69-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը*

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան

Դ.Սարգսյան

Վ. Հունանյան

Ա. Ֆեսիլյան

Գ. Ծատուրյան

Ռ.Ալեքսանյան

Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2018թ. 15-ը փետրվարի
Գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15 -Ի
ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ N- 5-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Լենուղի գյուղական համայնքի 2017 թվականի վարչական բյուջեն ըստ եկամուտների կատարվել է

1. ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Սեփական եկամուտների գծով նախատեսված 16377,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 14729,5 հազար դրամը, կամ կատարվել է 89,9 % -ով, այդ թվում՝

1.1Հողի հարկի պլանով նախատեսված 7447,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 6171,3 հազար դրամ, կամ կատարվել է 82,9% -ով:

1.2 Գույքահարկի պլանով նախատեսված 3800,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4449,7 հազար դրամ, կամ կատարվել է 117,1% -ով:
1.3 Գույքահարկ շենք-շինությունների պլանով նախատեսված 480,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 485,6 հազար դրամ, կամ կատարվել է 101,1% -ով:

2.ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ
1.Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 2700.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1969,5 հազար դրամ, կամ կատարվել է 72,9 %-ով:
2.Տեղական տուրքեր և վճարներ նախատեսված 150,0 փաստացի մուտքագրվել է 42,2 հազար դրամ :
3.Մատուցված ծառայությունների դիմաց գանձված վճարներ՝ նախատեսված 1800,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1611,6 հազար դրամ:

3.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ
ա)Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա) նախատեսված 21842,8 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 21842,8 հազար դրամ, կամ կատարվել է 100%-ով

Լենուղի գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսված 38220,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 36607,1 հազար դրամ կամ կատարվել է 95,7%-ով:

## ԾԱԽՍԵՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ա) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում՝ ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժին 1 խումբ 1 դասով նախատեսված 21930,0

հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 20178,5 հազար դրամ կամ կատարվել է 96,5 %-ով:

բ)Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժին 3 խումբ 3 դասով նախատեսված 150,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 108,0 հազար դրամ, կամ կատարվել է 72 %-ով:

գ)Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժին 6 խումբ 1 դասով նախատեսված 822,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 807,8 հազար դրամ կամ կատարվել է 98,2 %-ով:

դ)Ճանապարհային տնտեսություն՝ ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժին 5 խումբ 1 դասով նախատեսված 900,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 890,0 հազար դրամ կամ կատարվել է 98,9 %-ով:

2.Աղբահանություն ծախսերի գործառնական դասակարգման 05 բաժին 1 խումբ 0 դասով նախատեսված 1290,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1186,9 հազար դրամ, կամ 92 %-ով:
3.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 3479,3 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3162,9 հազար դրամ կամ կատարվել է 90,9 %-ով, որից
ա) 08 բաժին 2 խումբ 01 դասով (գրադարան) նախատեսված 930,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 930,0 հազար դրամ:
բ) 08 բաժին 2 խումբ 02 դասով (մշակույթի տուն) նախատեսված 1049,3 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1040,6 հազար դրամ:
գ) 08 բաժին 2 խումբ 04 դասով (այլ մշակութային կազմակերպություն) նախատեսված 1500,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1192,3 հազար դրամ:

4.Սոցիալական հատուկ արտոնությունների ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժին 7 խումբ 1 դասով նախատեսված 2300,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2180,0 հազար դրամ:
5. Պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդայինին հատկացվող ծախս՝ 600,0 հազար դրամ:
2017թ. վարչական բյուջեով նախատեսված 38227,3 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 36509,1 հազար դրամ, կամ կատարվել է 95,5 %-ով:

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2017թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 4337,7 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 577,0 հազար դրամ:
1.Օրենսդիր և գործադիր մարմիններ 01 բաժին 1 խումբ 1 դասով նախատեսված 900,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 0 հազար դրամ:
2.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում Ջրամատակարում 06 բաժին 3 խումբ 1 դասով նախատեսված 2157,7 հազար դրամի դիմաց ծախսվել է 577,7 հազար դրամ:
3. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն 01 բաժին 6 խումբ 1 դասով նախատեսված 120,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 0 հազար դրամ:

Տարեվերջի մնացորդ ընդամենը 1275.3 հազար դրամ որից՝

Վարչական բյուջե - 105,6 հազար դրամ

Ֆոնդային բյուջե - 169,7 հազար դրամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

15-ը փետրվարի 2018թ.
գ.ԼԵՆՈՒՂԻ

Թիվ-6

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ-7 ՆԻՍՏԻ N-32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով Լենուղի համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 7 նիստի Արմավիրի մարզի Լենուղի համայնքի 2018թ. բյուջեն հաստատելու մասին N-32-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն և լրացումները՝ համաձայն հավելվածի:

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական օրվան հաջորդող հրապարակման տասներորդ օրը:*

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն. Կոստանյան

Դ. Սարգսյան

Վ. Հունանյան

Ա. Ֆեսիկյան

Գ. Ծատուրյան

Ռ. Ալեքսանյան

Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2018թ.15-ը փետրվարի
Գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
15-Ի ԹԻՎ-2 ՆԻՍՏԻ ԹԻՎ-6-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ-7 ՆԻՍՏԻ N-32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1)Հաստատել համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ ընդամենը 1275.3 հազար դրամ՝
այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ՝ 105.6 հազար դրամ, ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 1169.7 հազար դրամ:
Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի 105.6 հազար դրամը ենթակա է մուտքագրման ֆոնդային բյուջեի:
2) Հողի հարկ ավելացնել 732.0 հազար դրամ:
3)Տեղական վճար տող 1351-ում՝ (Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության վճար) ավելացնել 70,0 դրամ:
4)Տող 1343-ոմ՝ (Համայնքի կողմից տրանց տեղական տուրքի գանձման մատուցված ծառայությունների վճար կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության վճար) պակասեցնել 1800,0 դրամ
5) Տեղական վճար տող 1351-ում՝ (Համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում) ավելացնել 1800,0 դրամով:
6) 06 բաժնի 3 խմբի 1 դասի 5113 հոդվածին ավելացնել 1275.3 հազար դրամ:
7) 01 բաժնի 6 խմբի 1 դասի 4637 հոդվածին ավելացնել 802.0 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15-ը փետրվարի 2018թ. Թիվ-7
գ.Լենուղի

# ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասով Լենուղի համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի գյուղական 2018 թվականի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Դ.Սարգսյան
Կ. Հունանյան
Ա. Ֆեսիլյան
Գ. Ծատուրյան
Ռ.Ալեքսանյան
Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2018թ. 15-ը փետրվարի
Գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ-2
ՆԻՍՏԻ ԹԻՎ-7 ՈՐՈՇՄԱՆ

# ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

1. Լենուղի համայնքում կա 442 տնտեսություն, բնակչության թիվը՝ 1727 բնակիչ, աղբահանվող փողոցների երկարությունը 5 կմ, փողոցների քանակը՝ 11:
2. Առաջացող կենցաղային աղբի ծավալը մոտավոր հաշվարկներով տարեկան կազմում է 1750 խ/մ:
3. Սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 78,1 հա:
4. Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով՝ 1 մլն. 290 հազ. դրամ:
5. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար բնակիչներից գանձվում է յուրաքանչյուր շնչին ամսական 100 դրամ վարձավճար:
6. Համայնքից 1,5 կմ հեռավորության վրա գտնվող 04-044-169-001 ծածկագրով հողամասից 1,5 հա տարածքը ճանաչվել է աղբավայրի տարածք:
7. Համայնքի սանիտարական աշխատանքները իրականացնելու համար ընդգրկված է 1 մեքենա՝ ԳԱԶ-53 ինքնաթափ:
8. Հավաքված աղբը անմիջապես տեղափոխվում է աղբավայր: Համայնքում աղբի տեսակավորման, վնասազերծման կամ պահպանման աշխատանքներ չեն կատարվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15-ը փետրվարի 2018թ. Թիվ-8

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համայնքի ղեկավարի առաջարկությամբ Լենուղի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Լենուղի համայնքի գյուղնշանակության հողերը տրամադրել վարձակալությամբ մրցութային կարգով և մեկ հեկտարի համար սահմանել մեկնարկային հետևյալ վարձավճարները:
   *Մերձ-Արաքսյան գոտի՝*

   վարելահող-2-րդ կարգ, 30912 ՀՀ դրամ
   վարելահող-3-րդ կարգ, 21010 ՀՀ դրամ
   պտղատու այգի-3-րդ կարգ, 28359 ՀՀ դրամ
   պտղատու այգի-2-րդ կարգ, 35311 ՀՀ դրամ
   խաղողի այգի-3-րդ կարգ, 34035 ՀՀ դրամ

   *Ուրց-Կոտայք-Շամիրամ գոտի՝*

   վարելահող-3-րդ կարգ, 11006 ՀՀ դրամ
   պտղատու այգի-3-րդ կարգ, 17371 ՀՀ դրամ
   խաղողի այգի-3-րդ կարգ, 25737 ՀՀ դրամ

2. Թույլատրել վարձակալությամբ հատկացնելու 25 տարի ժամանակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Դ.Սարգսյան
Կ. Հունանյան
Ա. Ֆեսիլյան
Գ. Ծատուրյան
Ռ.Ալեքսանյան
Մ. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15-ը փետրվարի 2018թ. Թիվ-9

# ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ղեկավարի ներկայացմամբ Լենուղի համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Լենուղի գյուղի սոցիալապես անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Դ.Սարգսյան
Վ. Հունանյան
Ա. Ֆեսիլյան
Գ. Ծատուրյան
Ռ.Ալեքսանյան
Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2018թվականի փետրվարի 15
գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի
ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ N 9 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

## ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

| | | |
|---|---|---|
| 1 | Մարտինյան Հովհաննես | 30000դրամ |
| 2 | Եղնազարյան Գեղեցիկ | 50000դրամ |
| 3 | Համբարձումյան Արմինե | 20000դրամ |
| 4 | Աբելյան Լեյլի | 20000դրամ |
| 5 | Գաբրիելյան Գեղեցիկ | 35000դրամ |